հրաշաւոր սեղան մի ի Սուրբ Աստուածածնայ Սրբոյ Գերեզմանի, յորմէ յարևմտակողմ, ի յիշատակ ազգիս Հայոց. և ի հաստատութեան իւրոյ մեծազօր թագաւորութեան։ Ցամի Տեառն, 1301, յուլիս 13» (Ստորագր. էջ 95, նաև Սաւաղան, էջ 599-600)։ Հեթում Բ. շինած է նաեւ Ս. Յարութեան տաճարի սնարքը, ըստ Հանանի (էջ 206). «ի մէջ հինգերորդ կամարին շինեալ է Հեթմոյ թագաւորին մերոյ՝ լոկ սեղան մի անծածկոյթ պատարագամատոյց, որ յետոյ ասի ի նախնեաց թէ՝ տուաք զսեղանս Դպտոց ազգին. որ և նոքա յեգիպտոս՝ ետուն ժողովրդոց մերոց եկեղեցի մի փոխան սորա. զի ո՛չ ունէաք եկեղեցի ի Մսր։ Եւ յետոյ իշխան մի Դպտոց եկեալ շրջապատեաց պատուհանօք և դրամբ. շինելով իբրև զմատուռ տախտակամածեալ զառաստաղն»։ Հեթում Բ. Երուսաղէմ գտնուած միջոցին՝ կ'աւանդուի թէ՝ երկու յիշատակներ թողած է Հայոց Ս. Յակոբի վանքին մէջ. մին՝ իր սարկ արքունի բանկարժէք գաւազանը, որ կը մնայ մինչև յայսօր և տարին երկու անգամ կը ցուցադրուի (Հայ-վենետ, էջ 89). միւսն՝ իր ադամանդազարդ մասնատուփը, որ կը գտնուի այժմ Գիւմուրտօ (Ջաւախք) Առաքել քհ. Կուրտինեանի մօտ։ Երուանդ Լալաեանց իր Ազգագրական Հանդէսի մէջ (1895, էջ 153-54) այս թանկագին մասնատուփի մասին կը գրէ՝ թէ ան ունի երկու երես, մին՝ կը պատկերացնէ Խաչելութիւնը Քրիստոսի, եւ միւսն՝ երկաթագիր արձանագրութիւն մըն է, զոր նոյնութեամբ կ'ընդօրինակենք. «Ես Հաց թագարս Հեթում, բազմ աշխատութեամբ ժղվցի նշխարքս սրբոց մէծին Ակոբա Մծպնա Հայրապետին եւ Նիկողաոսի սքանչելագործին եւ Ստեփաննոսին նախավկային եւ Պանդէլէոնի բժշկին զոր աստկա պհպանութիւն հոգոյս և մարմնոյ իմոյ թվին ԷՃԽԵ (=1296)ին մալսի Ի ին սբ նշանս շինվեցաւ.»։ Կը պատմուի նաև թէ՝այս մասնատուփը Կուրտինեան քհ.ի հայրը գներ է 800 ռուպլիի Բարալէթցի Աղաջան Գալուստեանէն, որ՝ Լալաեանցի Բարալէթ գտնուած միջոցին պատմեր է՝ թէ այդ սրբութիւնը մնացած է իր հօրը՝ Գալուստէն, որ Արտահանցի Սողոմոն անուն մէկու մը քով որդեգիր եղած է, այս Սողոմոնը եղբայր մը կ'ունենայ, որ Երուսաղէմի միաբան եպիսկոպոս մը ըլլալով նուիրակ էր Կարնոյ. վերջինս երբ Արտահան կուգայ իր եղբօրը՝ Սողոմոնի մօտ կը վախճանի, և եղբայրն ալ եպիսկոպոսին զոյքե-